

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19) Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Օրագրերի Համար

Վերջին թարմացումներ.

12/30/20:

- Բազմաթիվ դեպքերի առցանց հաղորդման համար հղման ավելացում՝ www.redcap.link/covidreport:
- Պահանջվող կարանտինի ժամանակահատվածի թարմացում COVID-19 ունեցող անձի հետ սերտ շփվողների համար:
- Թարմացված ախտանիշների զննմանը զուգակցված շնչարգելության/դժվարացած շնչառությամբ, ավելացվել է նաև համի կամ հոտի նոր կորուստ:
- Հավաքական բնակավայրերի կարգավորումների թարմացումներ՝ ներառյալ այցելությունները և խմբային գործողությունները, վերահսկողության փորձարկումները և սահմանված կանաչ/դեղին/կարմիր գոտիները:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը (DPH) հայցում է ձեր օգնությունը Լոս Անջելես Շրջանում նոր տիպի (նոր) 2019 կորոնավիրուսային հիվանդության (հապավումը՝ COVID-19) տարածումը դանդաղեցնելու համար: Խմբային տները, խնամատար տները, պատանիների ժամանակավոր ապաստարանները և կարճաժամկետ թերապևտիկ ծրագրերը հատուկ ուշադրության կարիք ունեն տարածումը կանխելու համար՝ հաշվի առնելով, որ.

- Երեխաները կարող են տեղափոխվել տարածքներում, տան և տարածքների միջև.
- Տարածքները չեն կարող խուսափել աշխատակազմի և երեխաների բոլոր փոխշփումներից դրսի այցելուների հետ, և
- Երեխաների, հատկապես փոքր երեխաների համապատասխանության ապահովումը եզակի մարտահրավերներ է առաջացնում:

ԻՆՉ Է ՆԵՐԱՌՈՒՄ ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

Որպես COVID-19 բռնկմանն ի պատասխան հիմնական, առաջին քայլ՝ մենք խստորեն խորհուրդ ենք տալիս բոլոր խմբակային տներին, խնամատար ընտանիքի գործակալություններին (FFA), ժամանակավոր ապաստարանների խնամքի հաստատություններին (TSCF) և բնակության կարճաժամկետ թերապևտիկ ծրագրերին (STRTP) վերանայել և թարմացնել արտակարգ իրավիճակների ծրագրերը և դիտարկել հիմնական ծառայությունները շարունակելու ուղիներ, եթե տեղում գործողությունները պետք է ժամանակավորապես կրճատվեն:

Սույն փաստաթուղթը տրամադրում է ընդհանուր տեղեկատվություն COVID-19-ի մասին և սահմանում է հատուկ գործողություններ այդ հիմնական առաջին քայլից այն կողմ, որը կօգնի դանդաղեցնել շնչառական վարակների տարածումը՝ ներառյալ COVID-19-ը:

Սույն փաստաթղթի նպատակն է օգնել խմբակային տներին, FFAներին, TSCFներին և STRTPներին զարգացնել ռազմավարություններ, որպեսզի հնարավոր լինի.

- Կանխել և նվազեցնել COVID-19-ի տարածումը ձեր հաստատությունում:
- Կանխել և նվազեցնել COVID-19-ի տարածումը հաստատությունների միջև և դրանցից դուրս:

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19) Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Օրագրերի Համար

Նշենք, որ սույն փաստաթուղթը տարածվում է միայն վերնագրում նշված հաստատությունների տեսակների վրա, և ոչ թե ռեսուրսային ընտանիքների վրա: Փոխարենը, ռեսուրսային ընտանիքները պետք է անդրադառնան DPH COVID-19-ի անհատների և տնային տնտեսությունների տեղեկատվությանը՝ հետևյալ կայքում: ([GuidanceIndividualsHouseholds.pdf](#)):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է նոր կորոնավիրուսը:

COVID-19-ը առաջանում է վիրուսից, որը նախկինում չի դիտարկվել մարդկանց շրջանում: Ինչ-որ առումով այն նման է մեր տեսած այլ վիրուսներին, բայց կան կարևոր գործոններ, որոնք առանձնացնում են այն:

- Մարդկանց մեծ մասը կարող է հիվանդանալ: Քանի որ այն նախկինում երբեք չի վարակել մարդկանց, հավանական է, որ անձեռնամխելի լինեն միայն այն մարդիկ, ովքեր ունեցել են հիվանդությունը, և այն մարդիկ, ովքեր ամբողջությամբ պատվաստվել են, և հավանական է, որ ձեռք բերած կլինեն իմունային համակարգ:
- Այն կարող է անցնել անձից անձ ավելի հեշտ, քան որոշ այլ վիրուսներ:
- Այն կարող է տարածել յուրաքանչյուր անձ, ով որևէ ախտանիշ չունի, և տեղյակ չէ, որ վարակված է:
- Չնայած՝ մարդկանց մեծամասնության մոտ այն առաջացնում է մեղմ կամ միջին ախտանիշներ, սակայն որոշ դեպքերում կարող է շատ լուրջ և նույնիսկ մահացու լինել:

Բարձր վտանգի խմբեր

COVID-19-ի համար բարձր վտանգի խմբերը ներառում են 65 տարեկանից բարձր մարդկանց, քրոնիկ հիվանդություններ ունեցող անձանց (ներառյալ այն հիվանդությունները, որոնք ազդում են սրտի, թոքերի կամ երիկամների վրա) և այն մարդկանց, ովքեր ունեն թուլացած իմունային համակարգ հիվանդության, քիմիաթերապիայի կամ այլ բուժման և բժշկական պայմանների հետևանքով:

1 տարեկանից ցածր երեխաները և որոշակի առողջական խնդիրներ ունեցող երեխաները՝ ներառյալ գիրություն, ասթմա, շաքարախտ և այլն, կարող են լուրջ հիվանդության ավելի բարձր վտանգի ենթակա լինել, քան մյուս երեխաները, երբ նրանք վարակվում են: Երեխաների շրջանում [Հավանական բարձր վտանգի պայմանների ամբողջական ցուցակը](#) հասանելի է CDC-ի միջոցով:

Որո՞նք են COVID-19-ի ընդհանուր ախտանիշները:

COVID-19-ով վարակված մարդիկ ունեցել են ախտանիշների լայն շրջանակ՝ սկսած մեղմ ախտանիշներից մինչև ծանր հիվանդություններ: COVID-19-ի ախտանիշները կարող են ներառել հետևյալ ախտանիշների որոշ համադրություն.

- Ջերմություն (100.4 F կամ բարձր)
- Հագ:
- Շնչարգելություն կամ դժվարացած շնչառություն
- Դող
- Հոգնածություն
- Մկանային կամ մարմնի ցավ
- Գլխացավ
- Համի կամ հոտառության նոր կորուստ
- Կոկորդի ցավ
- Հարբուխ կամ հոսող քիթ
- Սրտխառնոց կամ փսխում
- Փորլուծություն

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19) Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տների, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Օրագրերի Համար

Երեխաների մոտ կարող է նաև լինել ստամոքսի խնդիր կամ վատ ախորժակ/վատ սնուցում, հատկապես 1 տարեկանից ցածր երեխաների մոտ: Հաստատությունները պետք է նպաստեն կամ խրախուսեն ախտանիշ ունեցող անձնակազմի բոլոր երեխաներին և երիտասարդներին անցնել թեստավորում: Անհրաժեշտ է նաև թեստավորել հայտնի COVID-ով հիվանդների հետ սերտ շփում ունեցողներին: Հաստատությունները, հնարավորության դեպքում, պետք է անցկացնեն իրենց սեփական թեստավորումները: Թեստավորման անհրաժեշտության դեպքում աշխատակազմի անդամները կարող են դիմել իրենց հիմնական բժշկին:

Անմիջապես բժշկական օգնության դիմեք՝ զանգահարելով 911 այն բնակիչների համար, ովքեր COVID-19-ի հետևյալ նախանշաններից որևէ մեկն ունեն.

- Դժվարացած շնչառություն
- Շարունակական ցավ կամ ճնշում կրծքավանդակի շրջանում
- Նոր շփոթվածություն կամ արթնանալու դժվարություն
- Կապտած շուրթեր կամ երես
- Այլ լուրջ ախտանիշներ

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

Ինչպե՞ս են տարածվում կորոնավիրուսները:

Ինչպես այլ շնչառական հիվանդությունները, մարդկային կորոնավիրուսները հիմնականում ախտանիշներ ունեցող վարակված անձից փոխանցվում են մյուսներին հետևյալ կերպ.

- Շնչառական կաթիլներ, որոնք արտադրվում են այն ժամանակ, երբ վարակված անձը հագում կամ փռշտում է:
- Մերս անձնական շփում, ինչպիսին է վարակված անձին խնամելը:

COVID-19-ը կարող է նաև տարածվել դիպչելով մակերեսի կամ առարկայի, որի վրա առկա է վիրուս, ապա դիպչելով բերանին, քթին կամ աչքերին, բայց սա չի համարվում վիրուսի տարածման հիմնական եղանակ: Որոշ մարդիկ վարակվում են COVID-19-ով առանց որևէ ախտանիշ ունենալու, բայց նրանք կարող են փոխանցել վարակը մյուսներին:

COVID-19-ը նոր է, և մենք շարունակում ենք ամեն օր ավելի շատ ուսումնասիրել, թե ինչպես է այն տարածվում, և ինչքան ժամանակ անց է անհատը հիվանդանում: Տեղեկատվության փոփոխությունների դեպքում ձեզ տեղյակ կպահենք: Մենք խրախուսում ենք ձեզ այցելել [DPH-ի Կորոնավիրուսի կայքէջը](#) ռեսուրսների համար՝ ներառյալ մի շարք փաստաթղթեր, որոնք տրամադրում են COVID-19 կանխարգելման և խնամքի ակնարկ, [Հաճախ Տրվող Հարցեր Աշխատավայրի Կառավարիչների Համար](#) և [COVID-19-ի Ախտանիշներ Ունեցող Երեխաների Խնամքի Ուղեցույց](#): Լրացուցիչ ռեսուրսները նշվում են սույն փաստաթղթի մեջ՝ ըստ անհրաժեշտության:

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՅԼԵՐ

Կանխք և նվազեցրեք COVID-19-ի տարածումը ձեր հաստատությունում:	
<p>1. Վարակման վտանգի նվազեցման համար քայլեր</p>	<p>Ցուցանակներ</p> <ul style="list-style-type: none"> - Երեխաների, երիտասարդների, անձնակազմի և այցելուների համար փակցրեք ցուցանակներ ձեռքերի լվացման և ձեռքերի ախտահանման կարևորության մասին: - Տրամադրեք ցուցանակներ և պարբերաբար հիշեցրեք երեխաներին և երիտասարդներին, որ վերջիններս տեղեկացնեն անձնակազմին, եթե ունենան <u>COVID-19-ի ախտանիշներ</u>(տենդ կամ դող, հազ, շնչարգելություն կամ դժվարացած շնչառություն, հոգնածություն, մկանային կամ մարմնի ցավեր, գլխացավ, համի կամ հոտառության նոր կորուստ, կոկորդի ցավ , հոսող քիթ կամ հարբուխ, սրտխառնոց կամ փսխում, փորլուծություն): <p>Ձևում</p> <ul style="list-style-type: none"> - Անմիջապես իրականացնել ախտանիշների զննում ամբողջ անձնակազմի, այցելուների, երեխաների և երիտասարդների համար: Աշխատակիցների, կամավորների, պայմանագրային աշխատողների կամ այցելուների մուտքային զննումը պետք է լինի կազմակերպության ռազմավարության մի մասը՝



Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

սահմանափակելու COVID-19-ի տարածումը իրենց հաստատություններում: Խնդրում ենք անդրադառնալ [սույն փաստաթղթին](#), որը տրամադրում է գննման լրացուցիչ ուղեցույց և օրինակի նմուշ՝ անհատին գննելու համար, նախքան նրա մուտքը հաստատություն: Խնդրում ենք նշել, որ. 1) մուտքային գննումը կարող է իրականացվել նաև հեռակա կարգով կամ այլ մեթոդների միջոցով, որոնք կարող են ավելի հարմար լինել և 2) խորհուրդ է տրվում կատարել ջերմաստիճանի փաստացի չափում մուտքի կետում, բայց դա պարտադիր չէ, քանի դեռ գննումը որոշում է՝ արդյոք անհատը ունեցել է տենդ:

- Եթե մուտքի գննումն իրականացվում է անձամբ, համոզվեք, որ.
 - Չնման տարածքը թույլ է տալիս պահպանել գննվող անձի հանդեպ անհատական և գաղտնիության մոտեցում :
 - Չննվող անձը գննման ամբողջ ընթացքում դեմքի կտորե ծածկոց է կրում և գննողից վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն է պահպանում:
 - Չննողը կրում է ինչպես դեմքի կտորե ծածկոց, այնպես էլ դեմքի վահան: Չննողն օգտագործում է ձեռնոցներ և ապահովում ձեռքի պատշաճ հիգիենա (օձառ և ջուր կամ ձեռքի ախտահանող միջոց առնվազն 60% սպիրտով) մինչև գննումը և դրանից հետո, եթե կա որևէ ֆիզիկական շփում, կամ փաստաթղթերի փոխանակում՝ յուրաքանչյուր գննման ընթացքում:
 - Եթե տեղում ջերմաչափում է կատարվում, գննողները պատշաճ կերպով պատրաստված են ջերմաչափերի օգտագործման և մաքրման հարցում: Անհպում ջերմաչափերը նախընտրելի են, բայց եթե օգտագործվում է շփում պահանջող ջերմաչափ, մաքրումը կատարվում է յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Մուտքի գննման և մարմնի ջերմաչափմանը վերաբերող բոլոր փաստաթղթերը բժշկական գրառումներ են: Գրառումների լրացման, պահպանման և վերանայման հետ կապված ընթացակարգերը, հետևաբար, պետք է համապատասխանեն բժշկական փաստաթղթերի գաղտնիության պահպանման, վարման և պահպանման հետ կապված բոլոր կանոնակարգերին:
- Անհատներին չպետք է թույլատրվի մուտք գործել, եթե նրանք նշում են, որ վերջին 10 օրվա ընթացքում ունեցել են ախտանիշներ, եթե նրանք ունեն մարմնի բարձր ջերմաստիճան (ավելին քան կամ հավասար 100.4°F կամ 38°C), կամ շփվել են անձի հետ կամ կասկածվում են նախորդ 10 օրվա ընթացքում COVID-19 ունենալու մեջ:

Տե՛ս նաև ստորև նշված 5-րդ բաժինը՝ երեխաների և երիտասարդների գննման վերաբերյալ:

Ձեռքերի Հիգիենա եվ Շնչառական Էթիկա

- Հաճախ լվացեք ձեռքերը ակոհոլային հիմքով ձեռքի ախտահանիչներով, որոնք պարունակում են առնվազն 60% ակոհոլ կամ օձառով և ջրով առնվազն

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

20 վայրկյան, հատկապես լոգասենյակ գնալուց հետո, ուտելուց առաջ, և քիթը մաքրելուց, հագալուց և փռշտալուց հետո:

- Այնուամենայնիվ, նշեք նախազգուշացումները փոքր երեխաների կողմից առանց մեծահասակների անմիջական հսկողության ձեռքի մաքրման միջոցների օգտագործման մասին: (Տե՛ս <https://www.cdc.gov/handwashing/hand-sanitizer-use.html>:)
- Ձեռքերի Ախտահանման Միջոցների Վերաբերյալ Ավելի Շատ Խորհուրդներ.
 - Ձեռքի ախտահանման բոլոր միջոցները երեխաների հասանելիությունից հեռու պահեք և վերահսկեք դրանց օգտագործումը:
 - Անմիջապես դիմեք բժշկի, եթե երեխաները կամ երիտասարդները կուլ են տվել ձեռքի ախտահանող միջոցները, կամ ունենում են ախտանիշներ այդ ապրանքների կրկնակի օգտագործումից հետո, ապա դիմեք ձեր թունավորման կենտրոնին (1-800-222-1222)՝ խորհուրդ ստանալու նպատակով:
- Նաև նկատի ունեցեք, որ ձեռքի որոշ մաքրող միջոցներ չպետք է օգտագործվեն, քանի որ դրանք կարող են.
 - Պարունակել մեթանոլ (փայտի սպիրտ) կամ 1-պրոպանոլ, որը կարող է առողջական լուրջ խնդիրներ առաջացնել, ինչպիսիք են կուրությունը, նյարդերի վնասումը և նույնիսկ մահը:
 - Աղտոտված լինել մանրէներով:
 - Իրենց մեջ բավարար քանակությամբ ալկոհոլ չունենալ՝ ճիշտ ազդեցությամբ գործելու համար:
 - Ամենաթարմ տեղեկությունների համար ստուգեք FDA-ի [Մեթանոլով Աղտոտված Ապրանքների Ցուցակը](#): Եթե ձեր ապրանքը այս ցուցակում է, անմիջապես դադարեցրեք այն օգտագործելը:
- Ծածկեք հազը և փռշտոցը անձեռոցիկով, ապա անմիջապես նետեք անձեռոցիկը և լվացեք ձեռքերը: Եթե չունեք անձեռոցիկ, օգտագործեք ձեր թևը (ոչ թե ձեռքերը):
- Հնարավորության դեպքում նվազագույնի հասցրեք սերտ շփումը և իրերի փոխանակումը, ինչպիսիք են բաժակները, սպասքը, խաղերը, խաղալիքները, սնունդը և խմիչքը:

Սոցիալական (Ֆիզիկական) Հեռավորություն՝ Խթանեք սոցիալական հեռավորության պահպանումը հաստատության ողջ տարածքում՝ հնարավորություն տալով երեխաներին, երիտասարդներին և անձնակազմին հնարավորության դեպքում պահպանել միմյանցից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն: Խուսափեք ձեռքսեղմումներից կամ ուրիշների հետ գրկախառնվելուց:

- Հաստատությունում վերակազմակերպեք ընդհանուր տարածքները, որպեսզի բնակիչների կուտակում չլինի:

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Այաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

- Կահավորեք ընդհանուր սենյակներն այնպես, որ աթոռներն իրարից ունենան 6 կամ ավել ոտնաչափ հեռավորություն և ուղղված լինեն իրարից հակառակ ուղղություններով, անձեռոցիկները, ձեռքի ախտահանիչները լինեն հեշտ հասանելի, և մոտակայքում լինի լվացարան՝ ձեռքերը լվանալու համար:
- Ընդհանուր սենյակներում մահճակալները և օրորոցները պետք է հնարավորության դեպքում տեղադրվեն առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա, և լինեն գլուխ դեպի ոտք դիրքով՝ գլխի դիրքը լինի հնարավորինս հեռու:
- Սնունդը պետք է մատուցել շախմատաձև կարգով կամ բացօթյա տարածքում, որպեսզի պահպանվի սոցիալական հեռավորությունը: Մատուցեք սնունդը երեխաներին և երիտասարդներին յուրաքանչյուր անգամ միևնույն խմբերով, որպեսզի նվազեցնեք վարակի տարածումը:
- Սահմանափակեք երեխաների և երիտասարդների փոխադրումը՝ թույլատրելով միայն կարևոր նպատակներով այցելությունները:
- Խմբակային միջոցառումները կարող են վերականգնվել և անցկացվել ինչպես նշված է ստորև 2-րդ բաժնում:

Համընդհանուր Աղբյուրի Վերահսկում – Աղբյուրների վերահսկման միջոցառումները ներառում են դիմակների կամ դեմքը ծածկող միջոցների օգտագործումը: Պահանջեք, որ բոլոր անձիք, ներառյալ աշխատակիցները, այցելուները և 2 տարեկանից բարձր երեխաները, կրեն առնվազն դեմքի կտորե ծածկոցներ: Դեմքի ծածկոցները կամ դիմակները պարտադիր են բոլոր անձանց համար բնակավայրի ամբողջ տարածքում, ընդհանուր կամ կիսովող տարածքներում, քայլուղիներում, կամ որտեղ հավաքվում են երեխաները, երիտասարդները և/կամ անձնակազմը:

- Աշխատակիցները, ովքեր աշխատում են միայնակ փակ տարածքներում, դեմքի ծածկոց կրելու կարիք չունեն, եթե նրանք չեն տեղաշարժվում ընդհանուր տարածքով, որտեղ կարող են հաղորդակցվել այլ աշխատակիցների կամ բնակիչների հետ:
- Վիրահատական դիմակները, եթե հասանելի են, պետք է պահպանվեն խնամակալների համար կամ ցանկացած երեխայի կամ երիտասարդի համար, ում մոտ հաստատված է կամ կասկածվում է COVID-19:
- 2 տարեկանից բարձր բոլոր երեխաները պետք է կրեն դեմքը ծածկող միջոց, երբ դուրս են գալիս իրենց սենյակից: Մա ներառում է այն երեխաներին և երիտասարդներին, ովքեր խնամքի համար պետք է պարբերաբար լքեն հաստատությունը:
- 2 տարեկանից ցածր երեխաներին, և այն երեխաներին ու երիտասարդներին, ովքեր, իմացական կամ բժշկական պայմաններից ելնելով, իրենց սենյակից դուրս չեն կարող կրել դեմքի ծածկոցը, ուստի նրանց չպետք է պարտադրել կրել



Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

	<p>դեմքի ծածկոց և չպետք է պարտադրել մնալ սենյակում: Այնուամենայնիվ, պետք է հնարավորինս շատ խրախուսել դեմքի ծածկոցների կրումը:</p> <ul style="list-style-type: none"> - Դեմքը ծածկող միջոց չպետք է պարտադրել նաև այն անձանց, ովքեր ունեն շնչառական խնդիր կամ անգիտակից են, անգործունակ են կամ չեն կարող հանել դիմակն առանց օգնության: Բնակիչներին, ովքեր չեն կարող կրել դեմքի ծածկոցներ, կարելի է առաջարկել դեմքի վահաններ կամ շղարշով դիմավահաններ: - Երբ աշխատակիցները երեխաների կամ երիտասարդների սենյակներում են, բնակիչները պետք է հնարավորինս առավել ծածկեն իրենց քիթն ու բերանն առնվազն անձեռոցիկով, բայց ամենաիրագրականը՝ դեմքի կտորե ծածկոցի օգտագործումն է: <p>Համախմբում</p> <ul style="list-style-type: none"> - Հնարավորության դեպքում երեխաներն ու երիտասարդները պետք է խմբավորվեն առավելագույնը 12 երիտասարդներով կազմված փոքր խմբերի, ովքեր հաճախ են շփվում իրենց բնակավայրերում, ճաշերի ընթացքում, գործունեության ընթացքում և այլն: - Նմանապես, պետք է արվի ամեն փորձ, որպեսզի աշխատակազմը աշխատի նույն խմբի հետ և չփոփոխվի տարբեր կարգավորումների միջև՝ ազդեցությունը սահմանափակելու համար:
<p>2. <i>Ընդհանուր ճաշերույթ և Խմբակային Միջոցառումներ</i></p>	<p>Սահմանափակ խմբակային միջոցառումներ և ընդհանուր ճաշերույթներ թույլատրվում են, եթե բնակավայրի տարածքում պահպանվում են հետևյալ պայմանները.</p> <ul style="list-style-type: none"> - Դեմքի ծածկոցները պահանջվում են, ինչպես նկարագրված է վերևում: - Ֆիզիկական հեռավորություն. <ul style="list-style-type: none"> • Խմբում 12 երեխայից և երիտասարդից ավել չի թույլատրվում: • Բոլոր երեխաներն ու երիտասարդները բոլոր գործողությունների ընթացքում պետք է առնվազն 6 ոտնաչափ հեռու լինեն միմյանցից և անձնակազմից: • Ամբողջ անձնակազմը պետք է հնարավորինս պահպանի 6 ոտնաչափ հեռավորություն ընդմիջման սենյակներում աշխատանքային գործունեության ժամանակ: • Գործողությունները պետք է իրականացվեն հերթափոխներով, որպեսզի պահպանվի ավելի լավ ֆիզիկական հեռավորություն: <ul style="list-style-type: none"> ○ Երեխաների և երիտասարդների այս հերթափոխները պետք է պահպանվեն միասին (օրինակ՝ երեխաների և երիտասարդների նույն խմբերը ամեն երեկո միասին են ճաշում), և անհատ երեխաները և երիտասարդները պետք է հնարավորինս մնան որոշակի տարածքում, որպեսզի նվազագույնի հասցնեն շփումը, եթե երեխան կամ երիտասարդը հետագայում ունենա COVID-19-ի թեստի դրական արդյունք: ○ Երեխաների և երիտասարդների մուտքի թերթիկ/ցուցակ օգտագործեք,



Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

	<p>ովքեր ներկա են խմբակային միջոցառումներին, ինչը կօգնի հետևել շփումներին, եթե երեխան կամ երիտասարդը հետազայում ունենա COVID-19-ի թեստի դրական արդյունք:</p> <ul style="list-style-type: none"> - Շրջակա միջավայրի ուժեղացված ախտահանում: <ul style="list-style-type: none"> • Բոլոր հանրային, հաճախակի հայման ենթարկվող մակերեսները պետք է ախտահանել, այն բանից հետո, երբ երեխաները, երիտասարդները կամ աշխատակազմը ազատում են տարածքը: - Եթե երեխաների և երիտասարդների շրջանում հայտնաբերվում են նոր դեպքեր, ընդհանուր գործողությունները պետք է դադարեցվեն առնվազն 14 օրով: Այս ընթացքում հաստատությունը պետք է վերանայի վարակի վերահսկման և կանխման իր աշխատանքները, որպեսզի կանխի հետագա նոր վարակները: Եթե երեխաների և երիտասարդների շրջանում 14 օր նոր հիվանդներ չկան, ընդհանուր գործողությունները կարող են վերականգնվել համընդհանուր աղբյուրների վերահսկման միջոցառումների և ֆիզիկական հեռավորության պահպանմամբ, ինչպես նկարագրված է վերևում: - Եթե երեխան կամ երիտասարդը ունի COVID-19-ի թեստի դրական արդյունք (ախտանիշներով կամ առանց ախտանիշ) կամ ունեցել է շփում COVID-19-ով վարակված անձի հետ, երեխան կամ երիտասարդը պետք է մեկուսանա կամ կարանտին պահպանի, ինչպես նշված է ստորև 5-րդ և 13-րդ բաժիններում: Երեխան կամ երիտասարդը չպետք է մասնակցի ընդհանուր ճաշկերույթներին և միջոցառումներին, չպետք է դիպչի ընդհանուր հարմարանքներին և սարքավորումներին, մինչև նա դուրս չգա կարանտինից կամ մեկուսացումից՝ ստորև ներկայացված 5-րդ կամ 13-րդ կետերի չափանիշները բավարարելուց հետո:
<p>3. Այցելուներ</p>	<p>Անհրաժեշտ այցելուները և անհրաժեշտ օժանդակ մասնագետները թույլատրելի այցելուներ են:</p> <ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ օժանդակ մասնագետներ են համարվում պայմանագրային առողջապահական մասնագետները, ներառյալ խորհրդատուները, ծառայություն մատուցողները և չափագրողները, եթե հաստատությունը սահմանում է նրանց որպես անհրաժեշտ: - Անհրաժեշտ այցելուներն են. <ul style="list-style-type: none"> • Անձր, ով անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերում ֆիզիկական, մտավոր և/կամ զարգացման խնդիրներ ունեցող հիվանդների, ինչպես նաև ճանաչողական խանգարումներ ունեցող հիվանդների համար. միայն մեկ անհրաժեշտ օժանդակ անձ կարող է ներկա լինել հիվանդի մոտ: • Դատարանի կողմից թույլատրված այցելելություններ ընտանիքի, փաստաբանների և CASA-ների (Դատարանի կողմից Նշանակված Հատուկ Փաստաբաններ) կողմից - Բոլոր հիմնական այցելուներին թույլատրվում է մտնել հաստատություն և պետք է. <ul style="list-style-type: none"> • Մուտքի մոտ ենթարկվեն զննման: Անհրաժեշտ այցելությունները պետք է



Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

հետաձգվեն, եթե այցելուի գնման արդյունքը դրական է (COVID-19-ի ախտանիշների կամ տարածման առումով) կամ վատառողջ է:

- Կրեն դեմքի կտորե ծածկոց կամ այլ համապատասխան դիմակ, որպեսզի պաշտպանեն մյուսներին այցելության ընթացքում, եթե այլ բան սահմանված չէ: Եթե անհրաժեշտ այցելուն ի վիճակի չէ կամ չի ցանկանում պահպանել այս նախազգուշական միջոցները, ապա պետք է հաշվի առնել մուտքի սահմանափակումը:
- Սահմանափակվեն այցելվող երեխայի կամ երիտասարդի սենյակով կամ հաստատության կողմից նշանակված այլ վայրով: Եթե այցելությունների համար օգտագործվում են փակ տարածքներ, օգտագործեք լավ օդափոխությամբ սենյակ (օրինակ՝ պատուհանները բաց):
- Իրականացնեն ձեռքերի հիգիենա առնվազն այցելությունից առաջ և հետո:
- Հաստատությունում իրականացնեն ֆիզիկական հեռավորության պահպանում:
- Աշխատակազմը պետք է վերահսկի այցելությունը, որպեսզի համոզվի, որ հետևում են վարակի վերահսկման ուղեցույցներին (ապահով հեռավորություն, դեմքի ծածկոցներ, ֆիզիկական շփման բացառում), որպեսզի ապահովվի անվտանգ այցելություն և երեխայի/երիտասարդի, և նրա հարազատների համար:
- Այցելուներին պետք է խորհուրդ տալ հետևել իրենց շնչառական վարակների նշաններին և ախտանիշներին առնվազն 14 օր հաստատությունը լքելուց հետո, և եթե ախտանիշներ ի հայտ գան, ինքնամեկուսանան տանը, կապվեն իրենց բժշկի հետ, և եթե COVID-ի թեստի դրական արդյունք ունենան, տեղեկացնեն հաստատությանը ամսաթվի(երի) մասին, երբ նրանք եղել են հաստատությունում, անհատների մասին, ում հետ նրանք շփվել են, և տեղերի մասին, որոնք նրանք այցելել են հաստատության ներսում: Հաստատությունները պետք է անմիջապես գնման ենթարկեն անձանց, ում հետ եղել է շփումը, և բացահայտված դեպքերի հիման վրա ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը վարակի վերահսկման համար:

- Ոչ էական այցելուներ.

- Բացօթյա այցելությունները կարող են վերականգնվել հետևյալ պահանջներին համապատասխան.
 - Այցելությունները պետք է նախապես գրանցվեն:
 - Արտաքին այցելությունը թույլատրվում է երեխաների և երիտասարդների համար, ովքեր չունեն COVID-19 (կանաչ գոտում):
 - Այցելուները պետք է գնում անցնեն ժամանման պահին: COVID-ի նշաններ կամ ախտանիշներ ունեցող այցելուներին չպետք է թույլատրվի այցելություն, քանի դեռ նրանք չեն ավարտել պահանջվող մեկուսացման շրջանը: Այցելուները, ովքեր շփում են ունեցել COVID-19-ով վարակված անձանց հետ, չպետք է այցելեն, մինչև նրանց կարանտինի ժամանակահատվածը չավարտվի:
 - Այցելուները պետք է պահպանեն 6 ոտնաչափ կամ ավել ֆիզիկական հեռավորություն: Եթե 6 ոտնաչափ հեռավորության պահպանումն

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

	<p>անհնար է, կարելի է օգտագործել թափանցիկ պլաստիկ բաժանարար:</p> <ul style="list-style-type: none"> ○ Երեխաները, երիտասարդները և այցելուները պետք է կրեն դեմքի ծածկոցներ: ○ Աշխատակազմը պետք է վերահսկի այցելությունը, որպեսզի համոզվի, որ վարակի վերահսկման ուղեցույցներին հետևում են (ապահով հեռավորություն, դեմքի ծածկոցներ, ֆիզիկական շփման բացառում), որպեսզի ապահովվի անվտանգ այցելություն և երեխայի/երիտասարդի, և նրա հարազատների համար: ○ Եթե եղանակը խանգարում է բացօթյա այցերին, այլընտրանքային տարբերակ է բաց դռնով կամ պատուհանով ընդհանուր տարածքները: Փակ տարածքում այցելությունը չի թույլատրվում, եթե բնակիչների և/կամ անձնակազմի շրջանում կա առնվազն մեկ COVID-19 դրական դեպք: Փակ տարածքում այցելությունը կարող է թույլատրվել, եթե բնակավայրում 14 օրվա ընթացքում բնակիչների և/կամ անձնակազմի շրջանում չի եղել COVID-19 դեպք: <p>- Այլ միջոցառումներ պետք է սահմանվեն այցելություններին աջակցելու համար:</p> <ul style="list-style-type: none"> • Այն մարդկանց, ովքեր այլ պարագայում այցելություն կիրականացնեին, շարունակեք առաջարկել հաղորդակցման այլընտրանքային տարբերակներ, ինչպիսիք են վիրտուալ հաղորդակցման միջոցները (հեռախոս, տեսահաղորդակցություն և այլն): • Ստեղծեք հաղորդակցման էլքային կետ (փոստային հղումների ցուցակ, կայք, ձայնագրության հնարավորություն ունեցող հեռախոսահամար և այլն) ընտանիքների հետ ժամանակակից հաղորդակցություն ապահովելու համար: • Ընտանիքների հետ կապ հաստատելու նպատակով կատարվող մուտքային զանգերի համար նշանակեք աշխատակազմի անդամներին որպես առաջին կոնտակտային անձերի և իրականացրեք կանոնավոր էլքային զանգեր ընտանիքներին նորությունների մասին տեղյակ պահելու նպատակով:
<p>4. <i>Ձևներ էրեխաներին և երիտասարդներին COVID-19-ի ախտանիշների հայտնաբերման համար</i></p>	<p>Բնակիչների զննումը</p> <ul style="list-style-type: none"> - Հետազոտեք բոլոր նոր երեխաներին և երիտասարդներին COVID-19-ի ախտանիշների բացահայտման համար կազմակերպված ընդունելության ժամանակ: - Եթե հնարավոր է, հետազոտեք ԲՈԼՈՐ երեխաներին և երիտասարդներին օրական զոնե մեկ անգամ՝ նոր ախտանիշներ բացահայտելու համար: Հիշեցրեք երեխաներին և երիտասարդներին հայտնել անձնակազմին COVID-19-ի ցանկացած նոր ախտանիշների մասին: - Եթե հնարավոր է, չափեք բնակիչների ջերմությունը ընդունելության ժամանակ և ապա ամեն օր՝ անհպում կամ մեկանգամյա օգտագործման ջերմաչափով: Ջերմություն է համարվում 100.4 F, կամ ավելի բարձր ցուցանիշը:



Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

	<ul style="list-style-type: none"> - Հաշվի առնելով ներկայիս բռնկումը՝ ենթադրվում է, որ շնչառական հիվանդության ախտանիշներ ունեցող ցանկացած բնակիչ կարող է վարակված լինել COVID-19-ով, և խորհուրդ է տրվում կատարել SARS-CoV2 թեստավորում՝ PCR թեստի միջոցով: Խրախուսեք սովորական շնչառական հարուցիչների, անհրաժեշտության դեպքում նաև գրիպի թեստավորումը՝ ցանկացած այլընտրանքային ախտորոշում սահմանելու համար: - Ապահովեք ստորև ներկայացված բաժնում նշված անվտանգության միջոցառումները բոլոր հիվանդ բնակիչների համար, մինչ թեստի պատասխանը դեռ ընթացքի մեջ է, և եթե բնակչի COVID-19 թեստի արդյունքը դրական է: - Պետք է կատարվեն բնակիչների ջերմաչափման գրանցումներ: - Եթե երեխան կամ երիտասարդը ժամանակավորապես լքում է հաստատությունը (օրինակ՝ տնային այցի համար, կամ եթե դուրս է գալիս առանց թույլտվության) և հնարավոր է, որ վարակվելու մեծ վտանգի մեջ է եղել հաստատությունից հեռու գտնվելու ժամանակ, երեխան/երիտասարդը պետք է կարանտինում մնա 10 օր, եթե դա իրագործելի է, իդեալականը՝ հաստատության առանձին թևում կամ տարածքում մնալն է:
<p>5. <i>Երբ բնակիչներն ունեն ախտանիշներ</i></p>	<p>Մեկուսացրեք Ախտանիշներ Ունեցող Բնակիչներին</p> <p>Բոլոր բնակիչները, ովքեր ունեն COVID-19-ով վարակման ախտանիշներ, անկախ այն բանից, արդյոք թեստավորվել են COVID-19-ի համար, թե ոչ, պետք է ներառվեն դեղին (կարանտինի) գոտում: (Վերջինս պարտադիր չէ, որ լինի հաստատությունում ֆիզիկապես առանձնացված տարածք, սակայն դեղին գոտում ներառված բնակիչները պետք է սահմանափակվեն իրենց սենյակի տարածքով, և այն դեպքում, եթե չեն բնակվում մեկտեղանոց սենյակում և ունեն սենյակակից, հարկ է, որ առանձնացվեն վերջինիցս 6 ոտնաչափ հեռավորությամբ կամ որևէ ֆիզիկական արգելքով [օրգանական ապակի, վարագույր]):</p> <ul style="list-style-type: none"> - Թեստավորեք բոլոր ախտանիշ ունեցող երեխաներին և երիտասարդներին COVID-19-ի առկայության համար: - Ախտանիշներ ունեցող երեխաները, ում COVID-19-ի թեստի արդյունքը բացասական է, պետք է մնան դեղին գոտում, մինչև չեն ունենա ջերմություն 24 ժամվա ընթացքում, և մինչև ախտանիշները կբարելավվեն: - Ախտանիշներ ունեցող երեխաները, ում COVID-19-ի թեստի արդյունքը դրական է, պետք է հապճեպ տեղափոխվեն կարմիր գոտի, որը մեկուսացած է մյուս բնակիչներից: <ul style="list-style-type: none"> • Այն պետք է լինի առանձնացված շինություն, սենյակ կամ սահմանանշված տարածք, հեռու ախտանիշներ չունեցող երեխաներից և երիտասարդներից, և իդեալական կլինի, որ ունենա առանձին լոգասենյակ: • Տեղադրեք հստակ ցուցանակներ բոլոր մեկուսացված տարածքների շրջակայքում, որպեսզի աշխատակազմը, երեխաները և երիտասարդները իմանան, որ պետք է հեռու մնան:

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալություններին, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարաններին և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

- Եթե COVID-ով վարակված երեխաների և երիտասարդների համար չկա առանձին սենյակներում կամ շինություններում բնակվելու ոչ մի տարբերակ, ապա պետք է կառուցվեն միջնապատեր (օր.՝ վարագույր, պահարան, և այլն)՝ COVID դրական և COVID բացասական երեխաների և երիտասարդների միջև հնարավորինս շատ արգելք ստեղծելու համար:
 - Պետք է առանձնացվի որևէ լոգասենյակ և պահվի միայն COVID-19 դրական անհատների օգտագործման համար: Եթե դա հնարավոր չէ, ապա անհրաժեշտ է մաքրել սենյակը ախտանիշներ ունեցող անձի օգտագործելուց հետո:
 - Եթե COVID-19 դրական երեխաներին և երիտասարդներին անհրաժեշտ է տեղաշարժվել ախտանիշներ չունեցող անձանց տարածքով, ապա նրանք պետք է կրեն վիրաբուժական դիմակ և նվազագույնի հասցնեն այդ տարածքներում անցկացվող ժամանակը:
 - COVID+ երեխաները և երիտասարդները պետք է ուտեն COVID բացասական բնակիչներից առանձին:
 - Եթե ճաշասենյակը ենթակա է ընդհանուր օգտագործման, մատուցեք սնունդը տարբեր ժամերի այնպես, որ ախտանիշներ ունեցող երեխաները և երիտասարդները չսնվեն ախտանիշներ չունեցող երեխաների և երիտասարդների հետ միաժամանակ, և մաքրեք տարածքը յուրաքանչյուր խմբից հետո՝ վարակի փոխանցման վտանգը նվազեցնելու համար:
 - Պետք է օգտագործվեն շարժական միջնապատեր, վարագույրներ (կամ միջնապատերի այլ ձևեր), որպեսզի պահպանվեն ընդհանուր օգտագործման տարածքներում տարանջատման կանոնները:
 - Եթե օգտագործվում են տարանջատող վահաններ, կարևոր է հետևել շինությունների կիրառելի հրդեհային նորմերին և կանոնակարգերին (օր.՝ պահպանել որևէ մուտք տարահանումների համար և չփակել հրդեհային տագնապի ցուցիչները):
 - Նվազագույնի հասցրեք երես առ երես COVID-19-ով վարակված երեխաների և երիտասարդների հետ հաղորդակցվող աշխատակազմի անդամների քանակը: Տրամադրեք հրահանգներ ամբողջ անձնակազմի համար՝ հիվանդության տարածումը կանխելու նպատակով: 15-րդ բաժինը ախտանիշներ ունեցող երեխայի կամ երիտասարդի հետ հաղորդակցվող աշխատակազմին տրամադրում է Անձնական Պաշտպանիչ Սարքավորումների ուղեցույց:
 - Երեխայի/երիտասարդի մեկուսացումը կարմիր գոտում կարող է ընդհատվել հետևյալ պայմանների ի հայտ գալու դեպքում:
 - Առնվազն 10 օր է անցել ախտանիշների ի հայտ գալուց ի վեր ԵՎ առնվազն 24 ժամ առանց տենդի՝ և առանց ջերմիջեցնող դեղամիջոցների կիրառման, և կա ախտանիշների բարելավում

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալություններին, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

	<p>(ինչպիսին են հազը և շնչարգելությունը): Այն անհատներին, ովքեր ունեն խիստ իմունային անբավարարություն, հնարավոր է կարիք լինի մեկուսացնել 20 օրով կամ առավել երկար ժամանակով: Տե՛ս ստորև նշված բաժին 7-ը՝ երեխաների/երիտասարդների այս խմբի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար:</p> <ul style="list-style-type: none"> ○ Աշխատակազմը պետք է ամենօրյա գրառումներ կատարի մեկուսացման մեջ գտնվող բոլոր երեխաների և երիտասարդների մասին՝ ախտանիշները վերահսկելու և մեկուսացման ավարտը որոշելու համար: ○ Եթե ախտանիշներ ունեցող երեխան կամ երիտասարդը համապատասխանում է COVID-19 հիվանդության բարդացումների մեծ վտանգի տակ գտնվող խմբին (օր.՝ ունի քրոնիկ հիվանդության նախապայման), անհապաղ զանգահարեք նրա առաջին բժշկական օգնության մատակարարին (PCP), եթե նրա ախտանիշները վատթարանում են, կամ տեղեկացրեք աշխատակազմին, որպեսզի վերջիններս զանգահարեն 911: 911 զանգահարելիս աշխատակազմի անդամները պետք է տեղեկացնեն հեռախոսավարին, որ տվյալ բնակիչը COVID-19-ի ախտանիշներ ունի: <p>Անհապաղ դիմեք բժշկական օգնության՝ զանգահարելով 911, եթե առկա է COVID-19-ի հետևյալ նախազգուշացնող նշաններից որևէ մեկը.</p> <ul style="list-style-type: none"> - Դժվարացած շնչառություն - Շարունակական ցավ կամ ճնշում կրծքավանդակի շրջանում - Նոր շփոթվածություն կամ բարձրանալու անկարողություն - Կապտած շուրթեր կամ երես
<p>6. Երբ ախտանիշներ չունեցող երեխայի կամ երիտասարդի թեստի արդյունքը դրական է</p>	<p>- Ախտանիշներ չունեցող բնակիչները, ում թեստի արդյունքը դրական է, պետք է տեղափոխվեն կարմիր գոտի և հետևեն բոլոր նույն ընթացակարգերին, ինչ որ ախտանիշներ ունեցող COVID-19-ով վարակված բնակիչները:</p>
<p>7. Երբ անձնակազմն ունի ախտանիշներ</p>	<p>Ախտանիշներ ունեցող աշխատակազմը</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատակազմը պետք է ամեն օր վերահսկի իր ախտանիշները, և հիվանդ անձը պետք է խրախուսվի գնալ տուն: Ուղղորդեք նրանց իրենց հիմնական բուժող բժշկի մոտ՝ SARS-CoV-2 թեստավորման համար: - Եթե անձնակազմի COVID-ի թեստի արդյունքը դրական լինի, բացահայտեք այն անձնակազմին, երեխաներին և երիտասարդներին, ովքեր սերտ շփում ունեն և նպատակային թեստավորում անցկացրեք (տե՛ս Բաժին 11): Կիրառեք նպատակային թեստավորման մարտավարությունը և հետևեք Նպատակային Թեստավորման Ուղեցույցին:



Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

	<ul style="list-style-type: none"> - COVID-19 կասկածվող կամ լաբորատորիայով հաստատված աշխատակազմը պետք է ապահովվի տնային մեկուսացման հրահանգներով և ուղղորդվի գնալ տուն՝ ինքնամեկուսանալու, ինչպես նաև տեղյակ պահի իր բժշկին, եթե ախտանիշները վատթարանան: - Ախտանիշներ ունեցող աշխատակազմը, որն ուղղորդվել էր տուն, կարող է ընդհատել տնային մեկուսացումը միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում. <ul style="list-style-type: none"> • Առնվազն անցել է 10 օր ախտանիշների ի հայտ գալուց ի վեր ԵՎ առնվազն 24 ժամ առանց տենդի՝ և առանց ջերմիջեցնող դեղամիջոցների կիրառման, և ախտանիշների բարելավում (ինչպիսին են հազը և շնչարգելությունը):
<p>8. Երբ աշխատակազմը չունի ախտանիշներ, և թեստի պատասխանը դրական է</p>	<p>Ախտանիշներ Չունեցող Աշխատակազմը</p> <ul style="list-style-type: none"> - Ախտանիշներ չունեցող աշխատակիցը, ում թեստի պատասխանը դրական է, անմիջապես թեստից հետո պետք է ուղարկվի տուն՝ ինքնամեկուսացվելու 10 օրով, և պետք է հետևի վերը նշված 8-րդ բաժնում թվարկված հրահանգներին:
<p>9. Ախտանիշներ Ունեցող Երեխաների, Երիտասարդների կամ Աշխատակազմի Վարակման Դեպքերի Հաղորդումը</p>	<p>Վարակման դեպքերի հաղորդումը</p> <ul style="list-style-type: none"> - Եթե ձեր հաստատությունում 2 կամ ավել երեխաների, երիտասարդների կամ աշխատակազմի անդամների COVID-19 թեստի արդյունքը դրական է, տեղեկացրեք Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությանը՝ զանգահարելով 888-397-3993 հեռախոսահամարով աշխատանքային ժամերին կամ (213) 240-7821 հեռախոսահամարով կամ առցանց www.redcap.link/covidreport:
<p>10. Կիրառեք թեստավորման մարտավարություններ</p>	<p>Վերահսկողական Թեստավորում</p> <ul style="list-style-type: none"> - Այն հաստատությունները, որոնք ներկայումս չունեն որևէ ախտորոշված COVID-19-ով վարակման դեպք բնակիչների կամ աշխատակազմի շրջանում, պետք է ամեն 7 օրը մեկ ամբողջ աշխատակազմի 25%-ի համար իրականացնեն վերահսկողական թեստավորում (օր.՝ ամեն 7 օրը մեկ թեստավորման համար ընտրել տարբեր աշխատակիցներ): <p>Արձագանքման Թեստավորում</p> <ul style="list-style-type: none"> - Երբ COVID-19-ով վարակված անհատները (բնակիչները կամ աշխատակազմը) բացահայտված են, ամեն 7 օրը մեկ պետք է կատարել բոլոր բնակիչների և աշխատակազմի թեստավորում, մինչև որ այլ հետագա վարակման դեպքեր չբացահայտվեն թեստավորման 2 հաջորդող փուլերի ժամանակ: Այս թեստավորման ավարտից հետո հաստատությունը պետք է վերադառնա ամեն 7 օրը մեկ աշխատակազմի 25%-ի վերահսկողական թեստավորման կատարմանը:

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

Նպատակային Թեստավորում

- Եթե հաստատությանը հասանելի չէ բոլոր բնակիչների և/կամ աշխատակազմի թեստավորումը, ապա առաջնահերթություն տվեք COVID-19-ով վարակվածների հետ սերտ շփում ունեցած անձանց թեստավորմանը: Եթե թեստավորումը ի հայտ է բերում լրացուցիչ դեպքեր, ապա նոր հետաքննություն է նախաձեռնվում այդ նոր դեպքերի շրջանակներում, որպեսզի բացահայտվեն, մեկուսացվեն և թեստավորվեն նաև վարակված անձանց հետ շփում ունեցած անձինք: Այս արձանագրությունը նույնն է հաստատությունում բացահայտված յուրաքանչյուր դեպքի համար: Անդրադարձեք [Նպատակային Թեստավորման Ուղեցույցին](#): Պոլիմերազային շղթայական ռեակցիայի թեստավորում (PCR testing) կատարելու նպատակով SARS CoV-2 նմուշներ (քիթ-կոկորդային, քթախցային, ռնգային կամ կոկորդային քսուքի տեսքով), գտեք դրանք ձեռք բերելու որևէ ճանապարհ հաստատության համար և ապա ուղարկեք այդ նմուշները առևտրական կլինիկական լաբորատորիա: Ստորև նշված ռեսուրսներն ապահովում են տեղում հավաքագրման ծառայություններ:
- Հաստատությունը պետք է առաջնահերթ դիմի [DHS-ի ուղեցույցին](#) կամ [Կալիֆորնիայի Թեստավորման Օպերատիվ Խմբին](#) լաբորատորիա գտնելու նպատակով:
- Եթե հաստատությունը 1 շաբաթվա ընթացքում վարակի շարունակական բռնկման ժամանակ չի կարողանում գտնել լաբորատորիա թեստավորում անցկացնելու համար, ապա դեպքի հաղորդումից հետո հաստատության համար նշանակված DPHN-ը կկազմակերպի թեստավորում DPH-ի համայնքային թեստավորման (հարվածային) թիմի կողմից: Թեստային գործիքակազմ է մշակվել՝ օգնելու հաստատություններին կապ հաստատել լաբորատորիայի հետ՝ անհրաժեշտության դեպքում թեստավորում կատարելու համար: Այդ գործիքակազմը կարելի է գտնել հետևյալ կայքում՝ <http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/healthfacilities/ccf/#testing>:

11. Ե՞րբ է սահմանվում կարանտին:

Վարակված Երեխաներ և Երիտասարդներ

- Այն երեխաները և երիտասարդները, ովքեր սերտ շփման մեջ են եղել ախտանիշներ ունեցող անձի հետ, պետք է տեղափոխվեն կարանտինային գոտի (դեղին գոտի) 10 օրով:
- Սերտ շփումը բնորոշվում է որպես՝
 - Հաղորդակցումը ախտանիշներ ունեցող անձի հետ 6 ոտնաչափ հեռավորության սահմաններում (անկախ այն բանից՝ COVID-19-ը թեստով հաստատվել է, թե՛ ոչ) ընդհանուր առմամբ 15 րոպե կամ ավել տևողությամբ՝ 24 ժամվա ընթացքում: Խնդրում ենք նկատի ունենալ նաև, որ մենք դեռ սերտ շփում ենք համարում այն երևույթը, ԵԹԵ նույնիսկ երկու կողմերն էլ դիմակներով/դեմքի ծածկոցներով են:

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

- Հպումը ախտանիշներ ունեցող անձի մարմնի արտադրած հեղուկներին և/կամ արտազատություններին (հազալիս/փռշտալիս, ընդհանուր պարագաներ օգտագործելուց, թքից), կամ ախտանիշներ ունեցող անձին առանց վիրաբուժական դիմակ կամ ձեռնոցներ կրելու ուղղակի կլինիկական խնամք տրամադրելը:
- Հնարավոր է, որ հաղորդակցումը տեղի է ունեցել վարակված աշխատակցի, երեխայի, երիտասարդի, կամ հաստատությունից դուրս գտնվող որևէ մեկի հետ՝ մինչ վարակված անձն ուներ ախտանիշներ, ԿԱՄ էլ 48 ժամ (երկու օր) ԱՌԱՋ այն պահից, երբ վարակված անձը ախտանիշներ է ունեցել:
- Ինքնամեկուսացումը պետք է սկսվի վարակված անձի հետ շփումից անմիջապես հետո և տևի 10 օր:
 - Եթե երեխան կամ երիտասարդը սկսում է ախտանիշներ ցուցաբերել կարանտինում գտնվելու ժամանակ, պետք է կիրառվեն 6-րդ բաժնում նկարագրված մեկուսացման ուղեցույցները: Երեխայի կամ երիտասարդի մեկուսացման ժամանակաշրջանը պետք է հաշվել ախտանիշների ցուցաբերման պահից, այլ ոչ թե կարանտինի սկզբից:

Վարակված Անձնակազմը


- Այն աշխատակիցները, ովքեր սերտ շփման մեջ են գտնվել COVID դրական երեխաների, երիտասարդների կամ անձնակազմի հետ, պետք է ուղարկվեն տուն՝ կարանտին պահպանելու, կամ տեղավորվեն տարածքում սահմանված կարանտինային գոտում՝ 10 օրով:
- Աշխատակազմի կարանտինի ուղեցույցները նույնն են, ինչ բնակիչներինը (տե՛ս Բացահայտված բնակիչների կարանտինը վերևում):
- Ինչնիցե, աշխատուժի ծայրահեղ պակասի ժամանակաշրջանում ախտանիշներ չունեցող բժշկական անձնակազմի անդամները, ովքեր հաղորդակցվել են COVID-19-ով վարակված անհատների հետ, կարող են շարունակել աշխատել ԱՅՆ ՊԱՅՄԱՆՈՎ, որ կրում են համապատասխան Անձնական Պաշտպանիչ Սարքավորումներ և հետևում վարակի վերահսկման համապատասխան միջոցառումներին: Ստորև տե՛ս 17-րդ և 18-րդ բաժինները՝ անձնական պաշտպանության պարագաների վերաբերյալ տեղեկություններին համար:
- Ախտանիշներ չունեցող բժշկական անձնակազմը, ով շարունակում է աշխատել, պետք է օրական երկու անգամ ինքնուրույն վերահսկի COVID-19-ի ախտանիշները՝ առաջին անգամ աշխատանքի գալուց առաջ և հաջորդը՝ մոտավորապես տասներկու ժամ հետո:
- Անձնակազմը, որը վարակման ազդեցության է ենթարկվել տանը, պետք է կարանտին պահպանի տանը՝ 10 օր, այնուհետև կարող է վերադառնալ աշխատանքի:

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

12. **Գոտիների միջև բնակիչների տեղաշարժման սխեման**



13. **Աշխատակազմի վերադարձը աշխատանքի**

Վերադարձ Աշխատանքի Մեկուսացումից կամ Կարանտինից հետո

- Աշխատակազմի անդամը, ով COVID-19 ախտորոշում է ունեցել, կամ COVID-19-ի ախտանիշներ ունի, կարող է վերադառնալ աշխատանքի հետևյալ դեպքերում.
 - Առնվազն 10 օր է անցել ախտանիշների ի հայտ գալուց ի վեր ԵՎ առնվազն 24 ժամ) առանց տենդի՝ և առանց ջերմիջեցնող դեղամիջոցների կիրառման, և ախտանիշների բարելավում (ինչպիսին են հազը և շնչաբզեցությունը): Ախտանիշներ չունեցող անձնակազմը, ում թեստի արդյունքը դրական էր, կարող է վերադառնալ աշխատանքի COVID-19-ի թեստը հանձնելուց 10 օր հետո:
 - Աշխատակազմի այն անդամը, ով սերտ շփում է ունեցել վարակված անձի հետ, կարող է վերադառնալ աշխատանքի՝ իր և վարակված անձի հետ վերջին շփումից 10 օր հետո:

14. **Քայլեր, որոնք պետք է ձեռնարկեն COVID-19-ի դրական արդյունք ունեցող վարակված(ներ)ը**

- Գործի դրեք արտակարգ իրավիճակների ձեր ծրագիրը, որպեսզի պաշտպանեք ձեր անձնակազմին և բնակիչներին:
- Անմիջապես բժշկական օգնության դիմեք՝ զանգահարելով 911 այն բնակիչների համար, ովքեր COVID-19-ի հետևյալ նախանշաններից որևէ մեկն ունեն.
 - Դժվարացած շնչառություն
 - Շարունակական ցավ կամ ճնշում կրծքավանդակի շրջանում
 - Նոր շփոթվածություն կամ բարձրանալու անկարողություն



Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Փամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

	<ul style="list-style-type: none"> • Կապտած շուրթեր կամ երես - Տեղեկատվություն փակցրեք և ձեր աշխատակազմին, երեխաներին և երիտասարդներին տեղեկացրեք վարակի տարածումը կանխելու հանրային առողջապահության առաջարկների և վարակի հետևանքով փոփոխված ծառայությունների վերաբերյալ: - Համոզվեք, որ հաստատության ներսում ընդհանուր օգտագործման բոլոր տարածքները հետևում են շրջակա միջավայրի մաքրման հաճախակի և արդյունավետ գործընթացներին: - Եթե 14 օրվա ընթացքում COVID-ի հաստատված դրական երկու կամ ավելի դեպքեր կան, ապա դեպքերի մասին զեկուցեք, ինչպես նշված է 10-րդ բաժնում: - Շրջակա Միջավայրի Առողջության Մասնագետները կարող են այցելություն կատարել խորհրդատվություն տրամադրելու և ախտահանման ու մաքրության գործընթացների վերաբերյալ տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով: Դուք կարող եք Շրջակա Միջավայրի Առողջության Մասնագետին հրավիրել՝ զանգահարելով Շրջակա Միջավայրի Առողջության Ծրագրին հետևյալ (626) 430-5201 հեռախոսահամարով:
<p>15. <i>Անհատական Պաշտպանիչ Սարքավորումների օգտագործման Ուղեցույց</i></p>	<p>Անհատական Պաշտպանիչ Սարքավորումներ Անձնակազմի համար</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատակազմի անդամները, ովքեր շփվում են ախտանիշներ ունեցող անհատների հետ, պետք է բնակչին վիրահատական դիմակ տրամադրեն և բնակիչների հետ սերտ շփման ժամանակ կրեն վիրահատական դիմակ, կամ N95 շնչառական սարք, եթե այն հասանելի է, ինչպես նաև դեմքի վահան կամ ակնոց: KN95 դիմակները հավասարազոր են վիրահատական դիմակներին: - Համոզվեք, որ բոլոր աշխատողները մաքրում են իրենց ձեռքերը՝ ներառյալ բնակիչների հետ շփումից առաջ և հետո, աղտոտված մակերեսների կամ սարքավորումների հետ շփումից հետո, ձեռնոցները հագնելուց առաջ, և ձեռնոցներ, թիկնոցներ և վիրահատական դիմակներ, կամ N95 շնչառական սարքեր հանելուց հետո: <p>Խնամատար Գործունեություն (այսպիսի ծառայություն մատուցող հաստատությունների համար)</p> <ul style="list-style-type: none"> - Կրեք մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ բոլոր խնամատարության և մաքրության ընդհանուր գործողությունների համար, մասնավորապես եթե հավանական է, որ շփում կունենաք արյան, մարմնի հեղուկների, արտազատուկների, վնասված մաշկի, կամ արյամբ, կամ այլ վարակիչ նյութերով աղտոտված մակերեսների, կամ սպիտակեղենի հետ: Դեն նետեք ձեռնոցները յուրաքանչյուր հիվանդի հետ աշխատելուց հետո, նորից մի օգտագործեք: Հետևեք ձեռքերի հիգիենային ձեռնոցները հագնելուց առաջ և ձեռնոցները հանելուց հետո: - Եթե բնակիչը շնչառական հիվանդություն ունի, մինչև 6 ոտնաչափ հեռավորության վրա խնամատար գործողություններ կատարելիս, կրեք N95 շնչառական սարք և դեմքի վահան, կամ ակնոց: Համոզվեք, որ այս



Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

	<p>գործողությունների ընթացքում բնակիչը ևս դիմակ ունենա: Դեղին և կարմիր գոտիներում հիվանդների հետ աշխատելիս՝ հերթափոխի ընթացքում պետք է կրել վիրահատական դիմակ, կամ N95 շնչառական սարք, որը աղտոտման դեպքում պետք է հանել: Նորից մի օգտագործեք:</p> <ul style="list-style-type: none"> - Ձեռնոցները և դիմակը հանելիս նախ հանեք և դեն նետեք ձեռնոցները: Այնուհետև, անմիջապես լվացեք ձեր ձեռքերը օձառով և ջրով առնվազն 20 վայրկյան, կամ օգտագործեք ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչ: Հաջորդը, հանեք և դեն նետեք դիմակը և անմիջապես կրկին լվացեք ձեր ձեռքերը օձառով և ջրով, կամ օգտագործեք ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչ: - Հաշվի առեք օգտագործել բազմակի օգտագործման պլաստիկ, կամ լվացվող թիկնոցը, կամ գոգնոցը և ախտահանեք դրանք կիրառությունների միջև, երբ (1) իրականացնում եք խնամատար գործողություններ, որտեղ սպասելի են ցայտերն ու հեղուկացիրները, և/կամ (2) իրականացնում եք շփման բարձր մակարդակ ենթադրող խնամատար գործողություններ՝ ներառյալ լողացնելը, որոնք հնարավորություն են ստեղծում պաթոգենների փոխադրումը խնամակալի ձեռքերի, կամ հանդերձանքի վրա: - Հնարավորության դեպքում աշխատեք շնչառական հիվանդության ախտահանիչներ ունեցող երեխաներին և երիտասարդներին անկողնային լոգանք տրամադրել, որպեսզի խուսափեք ցայտերից և դիմակները թրջվելուց: - Եթե աջակցություն եք տրամադրում երեխաներին կամ երիտասարդներին կերակրելու հարցում, սնունդը պատրաստելուց առաջ լվացեք ձեր ձեռքերը և համապատասխան միջնորմներ կրեք, ինչպիսին են ձեռնոցները և դիմակը, եթե կերակրման ժամանակ խնամվողը հիվանդ է: - Սպասքը լվանալու ընթացքում ձեռնոցներ կրեք և լվացեք ձեռքերը ձեռնոցները հանելուց հետո:
<p>16. Ախտահանման և մաքրության լավագույն կիրառությունները</p>	<p>Մաքրության Կիրառություն</p> <ul style="list-style-type: none"> - Պարբերաբար և արդյունավետ կերպով մաքրեք և վարակազերծեք հաճախակի շփման ենթարկվող բոլոր մակերեսները և առարկաները, ինչպիսին են բռնակները, կողափայտերը, սեղանները, ծորակների բռնակները և հեռախոսները: - Շրջակա միջավայրի մաքրությունը պետք է իրականացվի EPA-գրանցում ունեցող ախտահանիչ միջոցներով, որոնք համապատասխանում են թաց շփման ժամանակի պահանջներին: Տե՛ս public health guidance on cleaning in group settings: • Եթե EPA-գրանցում ունեցող ախտահանիչ միջոցը հասանելի չէ, օգտագործեք քլորային հիմքով սպիտակեցնող լուծույթ (մոտավորապես 4 թեյի գդալ սպիտակեցնող նյութ 1 կվարտա ջրում կամ 5 ճաշի գդալ (1/3 բաժակ) սպիտակեցնող նյութ մեկ գալոն ջրի համար): Սպիտակեցնող լուծույթը պատրաստեք ամեն օր, կամ ըստ պահանջի: Լուծույթի



Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

ուժգնությունը ստուգելու համար կարելի է օգտագործել թեստային թերթիկներ:

- Ալկոհոլային հիմքով ախտահանիչ միջոցները կարող են օգտագործվել, եթե ալկոհոլի պարունակությունը > 70%-ից, և շփման ժամանակը համապատասխանում է պիտակի հրահանգներին:
- Հիվանդներին պատկանող սպիտակեղենը, սպասքը և ափսեները առանձին լվանալու կարիք չկա, սակայն չի կարելի դրանք օգտագործել առանց մանրակրկիտ լվացման: Մաքրություն իրականացնող անձնակազմին հրահանգեք, որ խուսափեն լվացքը նախքան լվանալը “գրկելուց” կամ թափահարելուց, որպեսզի խուսափեն ինքնաղտոտումից: Մաքրություն իրականացնող անձնակազմին հրահանգեք, որ վարակված լվացքը ձեռք տալուց անմիջապես հետո իրենց ձեռքերը լվանան օձառով և ջրով, կամ ախտահանեն ալկոհոլային հիմքով պատրաստված ձեռքի ախտահանիչով:

Պարագաներ

- Ապահովեք բավարար հիգիենայի համար անհրաժեշտ պարագաներ՝ ներառյալ ձեռքի լվացման մաքուր և ֆունկցիոնալ կայանների, օձառի, թղթե սրբիչների և ալկոհոլի հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոցների հեշտ հասանելիությունը (հատկապես սննդի վայրերի և զուգարանների մոտ):
- Ձեռքերի հիգիենայի կայանները (հակաբակտերիալ օձառով և ալկոհոլային գելային արտադրանքով լվացարաններ) պետք է մատչելի լինեն ամբողջ հաստատությունում, հատկապես հաստատության մուտքերի մոտ:
- Համոզվեք, որ անձեռոցիկները հասանելի են, և բոլոր լվացարանները լավ հագեցած են օձառով և թղթե սրբիչներով՝ ձեռքերը լվանալու համար:
- Կրթեք և հիշեցրեք երեխաներին և երիտասարդներին ձեռքի պատշաճ հիգիենան իրականացնել ամբողջ օրվա ընթացքում, հատկապես զուգարան օգտագործելուց հետո և սնվելուց առաջ:
- Տեղադրեք աղբարկղը յուրաքանչյուր երեխայի, կամ երիտասարդի սենյակի ներսում՝ մուտքի մոտ (եթե նրանք խնամք են տրամադրում երեխային կամ երիտասարդին), որպեսզի աշխատակիցները հեշտությամբ դեն նետեն այնպիսի իրեր, ինչպիսիք են ձեռնոցները, վիրաբուժական դիմակները և թիկնոցները:

ՆՇՈՒՄ. DPH-ի Շրջակա Միջավայրի Առողջության Մասնագետները կարող են անհրաժեշտության դեպքում ձեր հաստատությանը տեխնիկական աջակցություն տրամադրել: Դուք կարող եք Շրջակա Միջավայրի Առողջության Մասնագետին հրավիրել՝ զանգահարելով Շրջակա Միջավայրի Առողջության Ծրագրին հետևյալ (626) 430-5201 հեռախոսահամարով:

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալություններին, Երիտասարդական Փամանակավոր Ապաստարաններին և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

Կանխեք և նվազեցրեք COVID-19-ի տարածումը հաստատությունների միջև

Փոխադրում

- Սահմանափակեք բոլոր երեխաների և երիտասարդների փոխադրումը՝ թույլատրելով միայն կարևոր նպատակներով այցելությունները:
- Երբ ախտանիշներ ունեցող երեխաներին և երիտասարդներին փոխադրում է անհրաժեշտ.
 - o Ախտանիշներ ունեցող երեխաները և երիտասարդները ՉՊԵՏՔ է փոխադրվեն ախտանիշներ չունեցող բնակչների հետ:
 - o Ախտանիշներ ունեցող երեխաներին և 2 տարեկան և ավելի բարձր տարիքի երիտասարդներին վիրահատական դիմակներ հագցրեք:
 - o Խուսափեք ախտանիշներ ունեցող բազմաթիվ երեխաներին և երիտասարդներին միասին փոխադրելուց: Երբ բազմաթիվ երեխաներին և երիտասարդներին անհրաժեշտ է միաժամանակ փոխադրել, երեխաները, երիտասարդները և վարորդը պետք է պահպանեն պատշաճ սոցիալական հեռավորություն (> քան 6 ոտնաչափ): Երեխան կամ երիտասարդը պետք է նստի մեքենայի մեջ վարորդի հակառակ կողմում՝ վարորդի նստարանից ամենամեծ հեռավորության վրա գտնվող նստարանին:
 - o Մեքենայի մեջ օդափոխության բարելավման նպատակով մեքենայի պատուհանները պետք է իջեցված լինեն:
 - o Ներառեք պատշաճ հիգիենայի պարագաներ՝ ներառյալ անձեռոցիկներ, աղբամաններ կամ աղբի տոպրակներ՝ օգտագործված անձեռոցիկները նետելու համար, և ակոնոլային հիմքով ձեռքի ախտահանիչ միջոցներ:
 - o Եթե վատթարացող շնչառական կարգավիճակի պատճառով ծրագրում եք երեխային կամ երիտասարդին տեղափոխել խնամքի ավելի բարձր մակարդակով վայր, տեղեկացրեք EMS-ին կամ այլ փոխադրողին այն մասին, որ երեխան կամ երիտասարդը չախտորոշված շնչառական վարակ ունի:

Ուղեցույց Վարորդների համար

- o Ախտանիշներ ունեցող երեխաների և երիտասարդների վարորդները պետք է համապատասխան նախազգուշական միջոցներ ձեռնարկեն, այդ թվում՝ կրեն անձնական պաշտպանիչ սարքավորումներ՝ ներառյալ վիրաբուժական դիմակ կամ N95, եթե նախապես կատարվել է դիմակի համապատասխան չափորոշումը:

Լրացուցիչ Աղբյուրներ

- LAC DPH կորոնավիրուսի կայքէջ. <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>
- Լոս Անջելեսի Առողջապահության Զգուշացումների Ցանց Հանրային Առողջապահության Վարչությունը (DPH) LAHAN-ի միջոցով էլեկտրոնային փոստով առաջնահերթ հաղորդակցությունները ուղարկում է առողջապահության ոլորտի մասնագետներին: Թեմաները ներառում են տեղական կամ ազգային մակարդակով հիվանդությունների բռնկումներ և ահազանացող առողջական վտանգներ: <http://publichealth.lacounty.gov/lahan/>
- [ՀՏՀ](#)
- [Ինչ Պետք է Իմանաք \(Տեղեկատվական Գծապատկեր\)](#)

Կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Յանտարային Առողջապահության Վարչություն

Ուղեցույց Խմբակային Տներին, Խնամատար Ընտանեկան Գործակալությունների, Երիտասարդական Ժամանակավոր Ապաստարանների և Կարճաժամկետ Բնակելի/Բուժական Ծրագրերի Համար

- [Մաքրություն Խմբային Կարգավորումներում](#)
- [Ձեռքերի լվացում](#)
- [Ուղեցույց Բազմընտանիք Բնակավայրերի Համար](#)
- [Հմուտ Բուժքույրական Հաստատությունների Ուղեցույց](#) և [ՀՏՀներ](#)

Եթե հարցեր ունեք և ցանկանում եք խոսել որևէ մեկի հետ, զանգահարեք Լոս Անջելեսի Շրջանի Տեղեկատվական գծին 2-1-1 հեռախոսահամարով, որը հասանելի է օրական 24 ժամ:

Մենք գնահատում ենք Լոս Անջելեսի Շրջանը առողջ պահելու ձեր պարտավորվածությունը և նվիրվածությունը: